ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 83-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՎՈՎ 4 ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 594-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հարգել Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական ղեկավար Գագիկ Հովսեփյանի գրությունը և տալ նախնական համաձայնություն Արենի համայնքի սեփականություն հանդիսացող թվով 4 բնակելի տները և դրանցով զբաղեցված տնամերձ հողամասերը նվիրատվության կարգով տրամադրել բնակելի տների սեփականաշնորհումից օգտված քաղաքացիներին:

2. Առաջարկել Արենի համայնքի ղեկավարին նվիրատվությամբ հատկացվող բնակելի տների շահառուներին պատվիրել և ներկայացնել համապատասխան փաստաթղթեր՝ շենքի սեյսմակայունության վիճակի մասին:

3. Քաղաքացիների դիմումների և սեյսմիկ եզրակացությունների հիման վրա կազմել նվիրատվության փաթեթներ և ներկայացնել առաջիկա ավագանու նիստերի քննարկմանը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**